

Արցախի պետական համալսարանը հայտարարում է ասպիրանտուրայի առկա ուսուցման համակարգի 2022 -2023 ուստարվա ընդունելություն:

Ասպիրանտուրայի փաստաթղթերն ընդունվում են **ա.թ. օգոստոսի 10-ից մինչև օգոստոսի 20-ը:**

Քննությունները կկազմակերպվեն **ա.թ. սեպտեմբեր ամսում:**

N	Դասիչ	Մասնագիտության անվանումը	Անվճար	Վճարովի
1.	Ա.04.02	Տեսական ֆիզիկա	1	-
2.	Է.00.02	Համաշխարհային պատմություն	1	-
3.	Ժ.01.01	Հայ միջնադարյան և նոր գրականություն	1	-
4.	Ժ.02.01	Հայոց լեզու	1	-
5.	ԺԲ.00.05	Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք	2	-
6.	ԺԲ.00.06	Միջազգային իրավունք	1	-
7.	ԻԴ.03.01	Աշխարհագրություն	1	-
		Պահուստային տեղեր	2	-
		Ընդամենը	10	-

Ցանկ

ասպիրանտուրա ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի.

1. Դիմում ռեկտորի անունով:
2. Բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին):
3. Օտար լեզու առարկայի ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ):
4. Ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում:
5. Ինքնակենսագրություն:
6. Երեք լուսանկար /3x4/:
7. Քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):
8. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ:
9. Անձնագիրը պատճենի հետ միասին:
10. Արագակար:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել համալսարանի գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժին կամ զանգահարել 047940443.170 հեռախոսահամարով: